Մրցույթ՝ Արմավիրի մարզի «Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ), ֆիզկուլտուրայի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում/Ձև 1/մեկ լուսանկար 3x4 չափի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/
- Անձը հաստատող փաստաթուղթ
- <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը/առկայության դեպքում/
- Ինքնակենսագրություն/Ձև 5/
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթերը/առկայության դեպքում/
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել կամ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև նոյեմբերի 3-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10^{00}- 15^{00}, բացի շաբաթ և կիրակի օրերից և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա **2022 թ. նոյեմբերի 4-ին՝ ժամը 14^{00}-ին,** «Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ում, հասցե՝ քաղաք Արմավիր, Աբովյան 182: